ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ СООБЩЕНИЯ

Կ. Վ. ՏՐԵՎԵՐ
(Ծննդյան 80-ամյակի առթիվ)

Գ. Ա. ՏԻՐԱՑՅԱՆ

Կամիլլա Վասիլևնա Տրեվերը պատկանում է այն ռուս մտավորականների թվին, որոնք հեղափոխությունից հետո անձնվիրաբար ու ոգևորությամբ լծվեցին սովետական մշակույթի ու գիտության ստեղծման ու զարգացման գործին։



Կ. Վ. Տրեվերը ծնվել է Պետերբուրգում և ստացել փայլուն կրթություն։ Ոսկե մեդալով ավարտելով գիմնազիան, նա ուսանում է Պետերբուրգի մանկավարժական ինստիտուտում, միաժամանակ հանդիսանալով Բեստուժևյան իգական բարձրագույն դասընթացների ազատ ունկնդիր։ 1914 թ. Կ. Վ. Տրեվերը էքստերն կարգով ավարտում է նաև Պետերբուրգի համալսարանի պատմա-փիլիսոփայական ֆակուլտետը։ Նա անցել է հոյակապ դպրոց, լինելով ականավոր գիտնականներ Ֆ. Ֆ. Զելինսկու, Մ. Ի. Ռոստովցեվի, Բ. Վ. Ֆարմակովսկու սանը։

Անջնջելի տպավորություններով լի ճանապարհորդությունը դեպի Հունաստան, դասական լեզուների (հին հունարեն և լատիներեն) անթերի իմացությունը երիտասարդ մասնագետի մեջ էլ ավելի ամրապնդեցին նրա հակումը դեպի անտիկ մշակույթն ու արվեստը։

Աշխատանքային գործունեությունը սկսելով 1913 թ. Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի հնագիտական հանձնաժողովում, Կ. Վ. Տրեվերը հաջորդ իսկ տարին հանդես է գալիս իր անդրանիկ հոդվածով՝ նվիրված մերձսևծովյան հին հունական Օլվիա քաղաքում գտնված մարմարե արձանի ուսումնասիրմանը։ Այդ փոքր, բայց արժեքավոր աշխատության մեջ դրսևորվեցին հեղինակի՝ հետագայում հատուկ զարգացում ստացած ընդունակությունները. դիպուկ, հակիրճ նկարագրություն, ոճաբանական նրբին վերլուծություն, զուգահեռների ճիշտ ընտրություն։

Կ. Վ. Տրեվերի գիտական ճակատագրի համար, սակայն, շրջադարձային նշանակություն ունեցավ 1919 թ. աշխարհի հռչակավոր թանգարաններից մե-

կում՝ Էրմիտաժում, աշխատանքի ընդունվելը և ծանոթությունը Հովսեփ Օրբելու հետ, որի հետևանքով նա փոխեց իր գիտական կողմնորոշումը դեպի Արևելքի պատմությունն ու մշակույթը։ Այդ կողմնորոշումը վերջնական դարձավ 1928 թ., երբ նա տեղափոխվեց Էրմիտաժի՝ Հ. Օրբելու ջանքերով և ղեկավարությամբ ստեղծված Արևելքի բաժինը, որպես Կովկասի, Իրանի ու Միջին Ասիայի ֆոնդապահ։

Այստեղ, և Ն. Մառի նախաձեռնությամբ հիմնված նյութական մշակույթի պատմության պետական Ակադեմիայում (ԳԱԻՄԿ), ուր նույնպես աշխատում էր Տրեվերը, իրանագիտությունը դարձավ նրա առաջին և հիմնական նախասիրությունը արևելագիտության բնագավառում, որին նա հավատարիմ է մնացել մինչև այսօր։

Արևելագետներին լավ հայտնի են Կ. Վ. Տրեվերի ընդհանրացնող աշխատությունները՝ նվիրված սասանյան արվեստի, դրամագիտության, դիցաբանության և նյութական մշակույթի պատմության տարբեր հարցերին։ Նման գործունեության համար մասնագետը պարարտ հող գտավ Էրմիտաժի Արևելքի բաժնում, վերջինիս պահեստներում ու ցուցասրահներում, որտեղ մի շարք ականավոր գիտնականների և առաջին հերթին Հ. Օրբելու ջանքերով կուտակվել էին Իրանի արվեստի ու մշակույթի առաջնակարգ նմուշների փայլուն հավաքածուներ։

Գիտական աշխարհում հատկապես մեծ արձագանք գտան Կ. Վ. Տրեվերի՝ իրանական գեղարվեստական մետաղագործությանը նվիրված ուսումնասիրությունները, որոնցից առավել նշանակալիցը «Սասանյան մետաղն» էր, գրված Հ. Օրբելու հետ միասին։ Կ. Վ. Տրեվերի աշխատությունների շնորհիվ ռուսական արևելագիտության առաջատար բնագավառներից մեկը՝ իրանագիտությունը, հատկապես Իրանի նյութական մշակույթի ու արվեստի ուսումնասիրումը, սովետական շրջանում նոր վերելք ապրեց։

1935 թ. Լենինգրադում ու Մոսկվայում գումարված իրանական արվեստին ու հնագիտությանը նվիրված միջազգային III կոնգրեսը, հաշվի առնելով Կ. Վ. Տրեվերի գիտական ծառայությունները, նրան ընտրեց կոնգրեսի գիտական քարտուղար։ Այդ օրերին Տրեվերի ծավալած գիտական ու կազմակերպչական գործունեությունը զգալիորեն նպաստեց գիտաժողովի հաջող անցկացմանը։ Այստեղ նա հանդես եկավ «Հունա-բակարիական արվեստի պրոբլեմը» զեկուցումով, որը 1940 թ. լույս տեսած նրա «Հունա-բակտրիական արվեստի հուշարձանները» ստվարածավալ մենագրության հիմքը դարձավ։

Աքեմենյան, մակեդոնական և սելևկյան աշխարհակալ պետությունների մասը կազմող Բակտրիանան մ. թ. ա. III դարի կեսերին, շուրջ մեկ հարյուրամյակ անկախություն է ձեռք բերում։ Այդ ընթացքում ժամանակակից Աֆղանստանի, սովետական Միջին Ասիայի, Հնդկաստանի ու Իրանի որոշ տարածքների վրա զարգանում է մի մշակույթ, որը գիտության մեջ ընդունված է կոչել հունա-բակտրիական։

Այդ մշակույթի առաջին լուրջ ուսումնասիրությունը ամփոփված է Կ. Վ. Տրեվերի վերոհիշյալ աշխատության մեջ, որի ատաղձը, ի դեպ, կազմում են այդ արվեստին վերագրվող, Էրմիտաժում պահվող բազմաթիվ առաջնակարգ հուշարձաններ։ Մշակութային տարբեր հոսանքների խաչմերուկում ձևավորվող այս արվեստի հիմքը, ինչպես ցույց է տվել Տրեվերը, տեղական-արևելյան (իրանական) տարրերն են՝ արգասավորված հունական գեղագիտական հո-

սանքներով և մի շարք ուրիշ (հնդկական ու չինական) ազդեցություններով։ Գիրքը գիտականորեն հիմնավորված կարևոր մի հիշեցում էր այն խոշոր դերի մասին, որ Բակտրիանայի հելլենիստական արվեստը ժամանակին կատարել է այդ նույն և հարևան տարածություններում զարգացող մշակույթների կյանքում։

Հայաստանի, նրա մարդկանց ու մշակույթի հետ Կ. Վ. Տրեվերի ունեցած կապերը վաղուց էին հաստատվել։

1929 թ. նա մասնակցում է ԳԱԻՄԿ-ի և պետական էրմիտաժի միացյալ արշավախմբի՝ Դաղստանում ու Հայաստանում տարվող աշխատանքներին։ 1936 թ. գիտնականը Ամբերդի հնագիտական արշավախմբի կազմում էր, իսկ 1939 թ. մասնակցում էր «Սասունցի Դավիթ» էպոսի 1000-ամյակի տոնակատարության հանդեսներին և դրում հատուկ մի հոդված՝ «Հայկական էպոսի ջրային Անթեոսը» խորագրով։

1943 թ. Տրեվերը գալիս է Հայաստան ու մնում այստեղ մինչև պատերազմի վերջը, աշխատելով Հայաստանի նորաստեղծ ակադեմիայի պատմության ինստիտուտում որպես ավագ գիտական աշխատող։ Սա մոտիկից ծանոթանում է Հայաստանի անցյալին ու ներկային, հիանում նյութական մշակույթի նրա հուշարձանների անուրանալի արժանիքներով և ուժերի ներածի չափով օժանդակում հանրապետության առաջադիմությանը։ Հենց այդ տարիներին նա առիթ է ունենում ուղղություն տալու մի շարք խոստումնալից հայ երիտասարդների առաջին քայլերին գիտության ասպարեզում։

Հայաստանում եղած տարիներին Տրեվերի գիտական ուշադրության կենտրոնում էին անտիկ ժամանակաշրջանի մեր հուշարձանները՝ Գառնիի հեթանոսական տաճարի ավերակները և Հայաստանի պետական պատմական թանգարանում պահվող օտարալեզու արձանագրությունները։

Այդ ուսումնասիրությունների անմիջական արդյունքը հանդիսացան Գառնիի հեթանոսական տաճարի և նույն վայրի նորագյուտ հունարեն արձանագրության մասին հոդվածները, որոնք հետագայում տեղ գտան 1953 թ. լույս տեսած «Հին Հայաստանի մշակույթի պատմության ուրվագծերը (մ. թ. ա. II դար—մ. թ. IV դար)» ծավալուն մենագրության մեջ, որը բաղկացած է երկու իրարից հստակորեն սահմանազատվող, բայց ընդհանուր խնդիրներով շաղկապված բաժիններից՝ Գառնիի ամրոցի հեթանոսական տաճարը և հին Հայաստանի արամեական, հունական և լատինական վիմագիր արձանագրությունները։ Քննության առարկա հարցերը իրենց համոզեցուցիչ մեկնաբանումը գտան հեղինակի հմուտ գրչի տակ և հաստատուն աղբյուր դարձան Հայաստանի հելլենիստական ու հռոմեական դարաշրջանի պատմության ու մշակույթի ուսումնասիրման համար։

Ի մի բերելով սկզբնաղբյուրներում ու գրականության մեջ Գառնիի տաճարին վերաբերող բոլոր վկայությունները, Տրեվերը կարևոր (մասամբ արխիվային նյութերից քաղված) տեղեկություններ է հաղորդում դարասկզբին Գառնիում տարված աշխատանքների մասին։ Տաճարի ճարտարապետական մանրամասների ու զարդաքանդակների ճշգրիտ նկարագրությունը հաջողությամբ մրցում է աշխատության մեջ բերված զուգահեռ հարուստ ու համոզեցուցիչ նյութի հետ, որը հեղինակին թույլ է տալիս հին Հայաստանի մշակույթի պատմության համար կարևոր նշանակություն ունեցող եզրակացության հանգել տաճարի՝ Փոքր Ասիայի համանման հելլենիստական հուշարձանների

հետ ունեցած կուլտուր-պատմական ակնհայտ առնչությունների վերաբերյալ։ Մենագրության երկրորդ բաժնում փաստորեն ներկայացված է հին Հայաստանի օտարալեզու վիմագիր արձանագրությունների դիվանը։ Ճիշտ է, այդ արձանագրությունների թիվը գրքի հրատարակումից հետո զգալի չափով աճել է (գտնվել են յոթ արամեական և մեկ լատինական ընդարձակ արձանագրություն), սակայն հեղինակի կողմից առաջ քաշված ընդհանուր հարցերը այսօր էլ որոշակի հետաքրքրություն են ներկայացնում։

Կ. Վ. Տրեվերի այդ մենագրությունը մեծապես խթանեց հին Հայաստանի հելլենիստական դարաշրջանի պատմության ու մշակույթի ուսումնասիրման գործին, Բառնիի պեղումների հետագա ծավալմանը, հեթանոսական տաճարի վերականգնման աշխատանքներին։

Հայաստանի և Վրաստանի պատմությունը համեմատաբար լավ ուսումնասիրված լինելով, Աղվանքի պատմական անցյալը նվազ ուշադրության էր արժանացել։ Աղվանքի պատմությանն ու մշակույթին նվիրված Կ. Վ. Տրեվերի մենագրությունը («Կովկասյան Ալբանիայի պատմության և մշակույթի ուրվագծեր. մ. թ. ա. IV դ.—մ. թ. VII դ.», Մ.—Լ., 1959) գալիս էր հաջող կերպով լրացնելու կովկասագիտության մեջ գոյություն ունեցող այդ բացը։ Այն փաստորեն ընդհանրացնող առաջին աշխատությունն էր Անդրկովկասի հնագույն ժողովուրդներից մեկի պատմության, սոցիալ-տնտեսական հարաբերությունների, նյութական մշակույթի մասին, շարադրված ինչպես գրավոր, այնպես էլ իրեղեն աղբյուրների հիման վրա։ Աշխատության առաջին երկու գլուխները նվիրված են նախաֆեոդալական՝ հելլենիստական ու հռոմեական ժամանակաշրջանին, երկրի ու ժողովրդի մասին առաջին տեղեկություններից սկսած (մ. թ. ա. IV դարի երկրորդ կես—մ. թ. IV դար)։ Երրորդ գլուխը ընդգրկում է ֆեոդալական հարաբերությունների առաջացման ժամանակաշրջանը մինչև արաբական տիրապետության հաստատումը։ Պատմական անցքերի շարադրանքը տրված է հարևան երկրների և առաջին հերթին հայ ժողովրդի պատմության հետ սերտորեն միահյուսված։

Անհրաժեշտ է հատկապես նշել այն անձնվեր աշխատանքը, որ կատարել է Կ. Վ. Տրեվերը ակադեմիկոս Հ. Օրբելու գիտական ժառանգության ուսումնասիրման և նրա ձեռագիր աշխատությունների հրատարակման ուղղությամբ։ Հ. Օրբելու գիտական ժառանգության առաջին մեծածավալ հատորը արդեն լույս է տեսել, հաջորդ երկու հատորները պատրաստ են տպագրության։

Սովետական կառավարությունը բարձր է գնահատել պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՍՍՀՄ ԳԱ թղթակից-անդամ Կ. Վ. Տրեվերի գիտական և հասարակական ավելի քան կեսդարյա բեղմնավոր գործունեությունը, պարգևատրելով նրան Լենինի և «Պատվո Նշան» շքանշաններով։

К. В. ТРЕВЕР

(К 80-летию со дня рождения)

Г. А. ТИРАЦЯН

(Резюме)

Имя Камиллы Васильевны Тревер, члена-корреспондента АН СССР, доктора исторических наук, профессора, крупного знатока истории и культуры Востока, широко известно не только в Советском Союзе, но и за его пределами.

Получив блестящую подготовку по античной истории и культуре в Петербурге, Тревер начинает свою научную деятельность в Археологической комиссии. Вскоре она поступает на работу в Эрмитаж и целиком посвящает себя изучению Востока, главным образом Ирана. Ее работы по сасанидскому искусству имеют важное значение для дальнейшего развития этой отрасли востоковедения. Доклад К. В. Тревер на III конгрессе по иранскому искусству и археологии (Ленинград—Москва, 1935) лег в основу ее большой работы по малоизученному разделу истории культуры эллинистического Востока — искусству Бактрии.

Очень плодотворными оказались связи К. В. Тревер с Арменией, ее прошлым и настоящим. Частые поездки в Армению вместе с академиком И. Орбели, постоянный интерес к древним памятникам Армении во многом обусловили появление ряда ценных работ, среди которых выделяется ее монография о культуре Армении эллинистического времени. В ней показана роль античного искусства в формировании древнеармянской культуры, выявлены ее местные корни.

В монографии о Кавказской Албании К. В. Тревер впервые прослеживает историческое и культурное развитие на территории этого малоизученного древнего народа Закавказья. В этой, как и в остальных работах, К. В. Тревер разносторонне пользуется как письменными, так и вещественными памятниками. В своих трудах К. В. Тревер предстает перед читателем как большой эрудит и вдумчивый ученый.